

ՄԵԼԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՆԻ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրության մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առիթներէն):

Շաբաթադրութիւնը ընդունվում է ամեն լիցուով:

Շաբաթադրութիւնները համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպեկով:
Տէլեֆոն № 253.

«ՄԵԼԻ» ԼՐԱԳԻՐԸ

Հոկտեմբերի 1-ին մինչև տարվայ վերջը
կարժենայ ԵՐԵՎԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20

Դիմել Тифлисъ, редакция «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
օգոստոսի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Ապագիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Ընդունված կէտերը. Վերջին տեղեկութիւն-
ներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասը և Մա-
մուլը. Գաղութները եւրոպական մասերը. Կո-
ստանդուպոլիսը. Նամակ Հաղարկութիւն. Նամակ
Կիւնիայի. Նամակ Շամախու. Նամակ Ալեք-
սանդրապոլիսի. Նամակ Գանձակի. Տեղեկու-
թիւններ գաղութի. Գաղութները ուսանական
մասերը. Թատրոն և երաժշտութիւն. Նա-
մակ Կարսի. Դիւանիքի ընդհանրութիւն.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—
Նամակ Պարսկաստանի. Արտաքին լուրեր.—
ՀՅՈՒՄԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿԵՏԵՐԸ

Ներքին տեղեկութիւն. 19-ին, կայացաւ
Թիֆլիսի գաղութական զեմստովային խոր-
հրդակցութեան վերջին նիստը:

Այն սկզբունքները, որոնք ընդունվե-
ցին այդ նիստում, հետեւեալներն են:

1) Ընտրողական սկզբունքը ընդունվելով ընդ-
հանուր ձայնաւորութիւնը: Ամեն մի չափա-
հաս անձ իրաւունք պէտք է ունենայ ընտ-
րուելու տեղական ինքնավարութեան գոր-
ծող անձանց ընտրութեան համար: Բա-
ցաւորութիւն կազմում են միայն քրէական
մեղադրանքի մէջ գտնուողները:

2) Ընտրող լինելու համար չէ պա-
հանջվում ոչ մի ցեղէն: Մի որ և է տե-
ղում վերաբնակվածները կարող են մաս-
նակցել ընտրութիւններին, եթէ այդ տե-
ղում նրանք ապրում են ոչ պակաս, քան
մի տարին:

3) Ընտրողներին ժողովին է վերապահ-
ված ընտրելու իր համար նախագահ: Ինչ-
պէս յայտնի է, մինչև այժմ եղած կանոն-
ներով նախագահ լինում էր ազնուական-
ութեան պարագլուխը:

4) Զեմստովոյն պէտք է լինի չորս տե-
սակի. ա) փոքր զեմստովային մարմին, բ)
գաղութական զեմստովո, գ) նահանգական
և դ) համաքրկային զեմստովո, բաղկացած
մի քանի նահանգներից:

5) Տեղական ինքնավարութիւնը պէտք
է լինի անկախ և ինքնուրոյն մի հաստա-
տութիւն:

6) Փոքր զեմստովային մարմին կազմա-
կերպութիւնը կառավարում է գիւղական
հասարակութեան նախաձեռնութեամբ:

7) Համաքրկային զեմստովոյն պէտք է
յանձնել պետական կալուածների և ար-
քունական կապալանոցների վերահսկողու-
թիւնը:

հրդակցութեան համար ընտրված 8 ան-
դամին:

12) Գաղութական խորհրդակցութեան
կողմից պէտք է ուղարկել ոչ թէ մէկ,
այլ երկու անձ, որպէս զի գաղութի շա-
հերի ներկայացուցչութիւնը աւելի լա-
ւապահովված լինի:

Թիֆլիսի գաղութական խորհրդակցու-
թեան որոշումները համապատասխան են
այն հայեցակէտին, որ պարզվեց հէնց ա-
ռաջին նիստերում: Այդ հայեցակէտը
ընդհանուր առմամբ համաձայն է Միքի-
րում մշակված ծրագրին, որը մեր երկրի
զանազան տեղերում արժանացաւ հա-
մակրութեան:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկրակի օր երեկոյեան Թիֆլիսում հե-
ռագրական լուր տարածվեց, որ Երեւա-
նում տեղի է ունեցել ընդհարում հայե-
րի և թուրքերի մէջ: Ընդհարման պատ-
ճառները և զոհերի թիւը մասին չը կա-
յին դրական տեղեկութիւններ և միայն
մի բան էր կապակցուիլով դուրս, այն է, որ
եղել է ընդհարում քաղաքում ու քաղա-
քից երկու վերստ հեռու մի տեղում և
թէ վարչութիւնը ձեռք է առել անմիջա-
կան խիստ միջոցներ: Այնուհետև ստաց-
վել են մասնաւոր մի քանի հեռագրեր, որոնց
մէջ յայտնված է, որ խաղաղու-
թիւնը վերականգնվել է կատարելապէս
չնորհիւ արագ և եռանդուն միջոցներով:

Երեւանից եկողները պատմում են, որ
Երեւանում տիրում էր մինչև այդ դէպքը
հանգիստ տրամադրութիւն և չը կային
նշաններ մօտալուտ ընդհարումների հա-
մար:

Եղած դէպքի ընտրութիւնը մեզ հա-
մար դեռ ընդորովին մութ է և ըստ ե-
րևոյթին նա մասնաւոր մի երևոյթ է ե-
ղել, որը յուզել է մարերը այն պատճա-
ռով, որ ազգութիւնների փոխադարձ
կասկածը ազգաբնակչութեան մէջ դեռ չէ
մարել և մարդիկ շտապում են պաշտպա-
նողական դիրքեր շահել իրանց համար:

Գնձակից եկած լուրերը ցոյց են տա-
լիս, որ զինուորական գեներալ Տակայշիլի-
ին այնտեղ ծրագրում է առաջիկայ գոր-
ծունէութեան մանրամասնութիւնները և
շուտով ճանապարհ կընկնի դէպի Շուշի
և Զանգեզուր:

Տակայշիլիին Զանգեզուրում աշխատե-
լու է միջոցներ ձեռք առնել, որպէս զի
քրկրդերի արշաւանքները ոչ մի աշխու-
թիւն չունենան և չը կրկնվի այն տխուր
երևոյթը, որ տեղի ունեցաւ երկու շա-
բաթ սրանից առաջ, երբ 12,000 հոգի
քրկրդ ձիաւոր միացան ընդհանուր ար-
շաւանք գործելու հայկական գիւղերի վրա:
Զանգեզուրի գաղութում առանձին հրա-
կողութեան է կարօտ և Արաքսի գետա-
փը, որ կազմում է պետութեան սահմա-
նը Պարսկաստանի հետ, որտեղից անհա-
պիստ տարրեր փորձեր են անում յար-
մար քաղէին ներս խուժել դէպի մեր
սահմանները:

Թէհրանից հեռագրում են Պետերբուր-
գի հեռագրական գործակալութեանը սեպ-
տեմբերի 17-ին. «Թիֆլիսից անգլիա-
կան հրապարտող մի մօծ պահակախմբով
մեկնեց Գիւրդիստան, ուր նկատվում է
յուզում և Կովկասի դէպքերի հետ կա-
պակցված»:

Երեւանից, սեպտեմբերի 19-ին, 10 ժամ 20
րոպէին առաւօտեան մեզ հեռագրում են.

«Ներքին ծառայի յետոյ սկսվեց հրաձգու-
թիւն, որ դադարեցրին զօրքերը, որոնք

վայրկենաբար երկացին քաղաքի բոլոր
փողոցներում պրինց Նապօլէօնի առաջ-
նորդութեամբ: Հրաձգութեան պատճառը
դեռ պարզված չէ: Երկու կողմի սպան-
վածների և վիրաւորների թիւը 15-ի չափ
է: Այսօր խաղաղ է, բազարը փակ է,
քաղաքում շրջում են բազմաթիւ պահակ-
ներ: Պրինց Նապօլէօնն արել է ազգա-
բնակչութեանը լուրջ ներշնչում կառնա-
խաղաղացում»:

Շուշուց մեզ հեռագրում են սեպտ. 19-ի ե-
րեկոյեան ժամը 5 և 15 րոպէին:

«Շուշու աղետին զոհ եղած հայերին
նաաստող կոմիտէտը նորից դիմում է
գլխավոր մարզկանց օժանդակութեանը:
Մի քանի հազար կիներ ու երեխաներ մնա-
ցել են անապատաւան և անհաց: Եղած
միջոցները չնչին են և սպաւում են:
Սարափիլի թանգութիւնը, առաջիկայ
մինչը, գաղութների թշուառացածներին
օգնելու անհրաժեշտութիւնը չափազանց
բարդացնում են խնդիրը:

Յանձնաժ. դովի նախագահ՝
Սոս Եպիսկոպոս

Բազուից, սեպտեմբերի 13-ին հեռագրել են
Պետերբուրգի հեռագր. «Նախահանքերի պա-
պանութիւնը, չը նայելով զօրքերի ժամանե-
լուն, դեռ ևս բաւարար չէ: Բերի Հէյբաթ
ուղարկված է 1000 զինուոր: Նախահանքերի
նաւթի և գոյքերի կողպուտը շարունակվում
է աւելի ուժեղ կերպով: Զը նայելով որ կա-
ռավարութիւնը խոստացել է մի քանի անգամ
շտապեցնել նախահանքերի պաշտպանութեան
հարցը, սակայն այդ բանը ձգձգվում է չա-
փազանց»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԸ

IX

Մի ակնաւոր նկարագրում է «СЮБО» լը-
րագրի մէջ Վերջին օրերը Բազում: Վերջին
օրերը այն սարսափներով, որոնք նախապէս
մայրաքաղաքի համար, կարելի է ասել, սով-
բական բան էին դարձել:

Տեղեկայ տեսարանը: Կատարեալ մեղու-
թիւն: Օղը լցված է հրահանգի կծու ծխով:
Նոր վերացել է դեմքերի հոտը. սպանված-
ների լուծված դիակները մի քանի օրերով
ընկած էին փողոցներում, ոչ ոք չէր համար-
ձակվում ձեռք առնել նրանց, որովհետև իւրա-
քանիւր անկիւնից մահ էր սպառնում:

Դիւերը—ուրիշ տեսարան: Սկսվում է հրա-
ձգութիւն, որ չէ դադարում մինչև լոյսի ա-
ռաջին ճառագայթները: Գաղութը երկու մասի
է բաժանված. բարձրութիւնները գրաւել են
թուրքերը, սակայն—հայերը: Հէնց որ
միտում է, թուրքերի դիրքերից սկսվում է
հրացանաձգութիւն, որին պատասխանում են
հայերը իրանց դիրքերից: Յարձակվում են
թուրքերը, իսկ հայերը պաշտպանվում են:

Սարափիլի է բանտները դրոյթիւնը: Բա-
զում ունի 200 հազար բնակիչ: Ինչը տանե-
րորդական մասը կազմում են բանտները, ո-
րո՞ք այժմ մնացել են առանց հացի: Բօրսա-
յում կառարեալ անգործութիւն է: Դատարանը
չէ գործում: Ամբողջ քաղաքային ուղարկված
փախել է, սկսած ուղարկված անգամներից
մինչև վերջին ծառայողները: Բանտները մէջ
պիտի սկսվեն հրաւիրութիւններ քաղաքում
թիւնից: Ո՞վ պէտք է հոգ»:

Թում է, թէ յունկարից առաջ նախահան-
քերը գործ սկսել չեն կարող:
«Իսկ ինչ են անում իշխանութիւնները ամ-
բողջ այդ ժամանակ:

«Այս հարցին կարելի է պատասխանել մի
ամբողջ շարք փաստերով:

«Գեներալ Ֆադէեւը հրատարակեց, ի մի-
ջ այլոց, մի հրաման, որով հրամայում էր
—Թնդանութիւնը բռնել այն տները, որտեղից

նկատված էր լինի հրաձգութիւն: Տները գըն-
դակաւորութիւնը սկսեց, և այս հողի վրա
տեղի ունեցան մի ամբողջ շարք միջադէպ-
քեր: Մի ինչ որ գործող զօրք էր տուել
Դիւերական տունը, յայտարարելով թէ այտե-
ղից գնդակներ են արձակում: Բերում են
թնդանութիւն և պատրաստվում են քարու-
քանդ անել տունը: Տունը լինէր է կեցողներով:
Դուրս է վազում տանտէրը և աղաչում չը
քանդել տունը, հաստատելով, որ ոչ ոք այս-
տեղից գնդակ չէ արձակել, որ գործող զօրք
այդպէս է թւացել: Օգիցերը պահանջում է
տանտէրից 3000 ռուբլի տուգանք: Տանտէրը
փող չունի, տալիս է մուրհակ: Երկար դէս ու
դէս ընկնելուց յետոյ, գործող զօրք, վերջապէս,
յայտնում է ձեռք, որ ինքը սխալվել է, իրան
այնպէս է թւացել թէ այստեղից գնդակներ
են արձակում:

Եթէ այդ վայրկեանին տանտէրը չը գըտն-
վէր տեղի ու տեղը, տունը քարուքանդ կան-
վէր և ո՞րքան անմեղ զոհեր կը ջարդվէին այդ
միջոցին:

«Մի քանի ուղեւոր արձակվեցին մի տան
վրա, ուր ապրում էին բացառապէս օտարա-
հայտականներ: Շատ փոքր տներ ջարդվեցին,
քիչ սպանվածներ չեղան այդ տներում:

«Եւ վերջապէս, Բազում տանտէրերի ահա-
գին մի խումբ գնաց գեներալ Ֆադէեւի մօտ.
առջիկայ գնում էին օտարապաշտականները: Տե-
ղի է ունենում այս խոսակցութիւնը:

«—Դուք անգլիացիք էք: Դիմեցէք ձեր հիւ-
պատոսին: Ես կարգադրութիւն կանեմ:

«—Դուք գերմանացիներ էք: Դիմեցէք ձեր
հիւպատոսին: Կարգադրութիւնն արված կը
լինի:

«—Ցրանախաղեր: Դիմեցէք հիւպատոսին:
«Եւ այլն և այլն:

«Ուսանելի խումբը կանգնած է լուռ: Վեր-
ջապէս, այդտեղից լսվում է յուսահատական
աղաղակ:

«—Իսկ այստեղ մեր է ուսուց հիւպատոսը:
«Գեներալը բարկացած շուռ է գալիս, և
նրա առջև կանգնեց յարգելի բաղաձայնի պ.
Դոյնիկով, առանցից, մօտկազմի, որ 37 տա-
րի է ապրում է Բազում:

«—Ձեր գերազանցութիւն,—ասում է նա—
ասացե՛ք մեզ իսկ առաջ հիւպատոսը մեր է:
Ո՞վ կը հոգայ մեր մասին: Անգլիացիներն էլ,
գերմանացիներն էլ, ֆրանսիացիներն էլ ու-
նեն պաշտպանութիւն. իսկ մենք միտեղ գըտ-
նենք:

«—Դուք հարկւմ էք,—բարկացած կանչում
է գեներալը:

«—Ակամայ հարածի նման կը լինի մարդ,
ձեռք գերազանցութիւն, երբ ամբողջ շաբաթ
հրաձգէ են պարպում ձեռք վրա, ձեռք տները
այրում են, իսկ օգնութիւն ոչ մի տեղից չը
կայ:

«Եւ վերջոյ ակնաւորեալ հաղորդում է մի
քանի տեղեկութիւններ զինուորական օգնու-
թեան մասին: Գեներալ Ֆադէեւին դեռ մայիս
ամսին էին նախազգուշացրել, թէ նախատես-
վում է կոտորած, բայց նա մի ինչ որ պատ-
ճառով աղէտի նախընթաց օրը քաղաքից
դուրս ուղարկեց մի ամբողջ գունդ: Եւ քա-
ղաքում համարեալ չը մնաց պահպանութիւն:
Պահանջված զինուորները Թիֆլիսից ուղարկ-
վեցին զինուորական գնացքով և 700 վերստ
տարածութիւնը անցան երեք օր ու գիշեր:

«Թէ ի՞նչպէս էին կառավարում գեներալ Ֆա-
դէեւի հրամանները—ընդորոշում է հետեւեալ
փաստը. նախագործ պ. Ս. խնդրում է պահ-
պանութիւն նախահանքերի համար, որոնք
դեռ չէին կրակված: Գեներալը համաձայնվում
է, և իսկոյն տէլեֆօնով նրա աղիւստանոր
հրաման է տալիս պրիստաւին և յայտնում նա-
խահանքերի համարները, հրամայելով պահա-
պանել նշանակելի: Դիւերը նախահանքը կրակ-
վում է: Պրիստաւը ոչինչ պահապաններ չը
տուեց և նախագործի հետ տեսնվելով, առանց
որ և է երկամութեան յայտարարեց, որ նախ
պէտք էր իրան շտեմանը:

42 42

ԳԱՂՈՒԱԾՆԵՐ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻՑ

«Сынъ Отецъ» լրագրի մէջ կարդում ենք. «Daily Mail» անգլիական լրագրի Օգոստոսյի թղթակիցը հաղորդում է սեպտեմբերի 5-ին, որ Բաթումից ոչ հեռու, Անակա կոչված տեղում, յայտնվել է մի շոգենաւ, բնականաւորապէս տեսակ հրազէն մթերքներով, յատկացրված կուղի կողմերից մէկի համար: Նաւի էջիկաւ-ժը բացառապէս թուրքերից էր բաղկացած»:

«Разсѣвътъ» լրագրում (№ 171) տպված է: «Շուշուց մեղ գրում են, որ քրիստոնեաների հաղորդակցութիւնը Եւրա կայսրանի հետ դեռ ընդհատված է, որովհետեւ ճանապարհը բռնկված է թուրք աւազակների հրոսակաւորութիւն: Նրանք խլում են տանվող կենսական մթերքների մեծ մասը, որի համար մեծ կաշիք է կայ քաղաքում: Այդպէս, Շուշու հայերը պաշարողական վիճակ են կրում, իսկ թուրքերը բեկերի միջոցով ազատ շփվում են աւազակների և մարդասպանների հետ և ձեռք են բերում անխափան ոչ միայն ուտելիք, այլ և զէնք: Բաղադրի իշխանաւոր անձինք, երեւի դրբի պակասութեան պատճառով, շատ բարեհաճ են վերաբերվում բեկերին: Վարչութեան կազմը, բացի գաւառներից, առաջվայ նման մնում է գլուխ թրքական: Նոյնը և Զանգեզուրում, Զիւլաշիւրում և Գանձակի նահանգի միւս գաւառներում, ուր ոստիկանապետները, պրիստանները, ոստիկանները, պահապանները —ամենքը նրանք են, որոնք նշանակվել են դեռ իշխան Գուլիյի ժամանակ տեղական թուրքերից, որոնք սերտ յարակցութիւն են պահպանում աւազակային խմբերի պետերի հետ: Բոլորովին անհասկանալի է, ինչու բարձր իշխանութիւնը ուղարկութիւն չէ դարձնում այդ երկուքի վրա և ինչ նկատումներով թողնում է թուրքերին իրանց տեղերում: Ի՞նչու են հայերը զանազան պատճառներով չեն ցանկանում փոխարինել թուրքերին հայերով, բայց միթէ անկարելի է դառնել անկաշառ և ետանդուն ուսմանը:

Երկրի խաղաղացման համար, դա կարեւոր հանգամանք է և շատ էական պայման: Թուրքական վարչութեան ներկայութիւնը ուղղակի խախտում է մուսուլման ժողովի յարձակումները...

—Նոյն լրագրում, նոյն համարում կարդում ենք Բագուից գրած հետեւի նամակը. «Վերջին ժամանակները Բագուում կանգնել են զէնքի և դրանք էլ դարձել. այդ վրում են և հայերը, և վրացիները, և ռուսները և օսմանգլիները. դս են միայն ֆանատիկոս թուրքերը, որոնք անձնատուր են եղել աւարառութիւնների և քրիստոնեաների սպանութեան, շնորհիւ տեղական վարչութեան թուլութեան: Օր չէ անցնում, որ սպանութիւններ չը լինեն. օգոստոսի 20-ից սկսած, 8 օրվայ ընթացքում այնտեղ կատարեալ կոտորած էր, իբրեւ սպանութեան, որը տեսնում է դեռ մինչև այսօր (սեպտեմբերի 19-ին), թէև նուազ չափով»:

Այդ յոգնածագիլը առաջ բերելով այն հանգամանքը, որ մի քանի տեղերում կող-կողները զինաթափ են անում պաշտպանվող հայերին, կցում է. «Այստեղ մենք հանդիպում ենք խաղաղ քաղաքացիների համար անհասկանալի և ցաւալի բազմաթիւ դէպքերից մէկին, այն է, որ կողակները խլում են զէնքը հայերից: Մասնաւոր է մարդկային միտքը, երբ մտածում են տեղական իշխանութեան այդպիսի գործողութեան հետեւնեւերի մասին, մասնաւոր երբ իմանում են, որ առանհակ հազար թուրքերին նահանգական իշխանութիւնը թողնում է զէնք կրել, իսկ քրիստոնեաներին ոչ: Զ՞ի որ ամեն կողմից և բոլոր նահանգներում, նախկին մուսուլման գաւառներում, մեղ վրա ուղղակի յարձակվում են ֆանատիկոս թուրքերը, «ղաղալով» հրատարակելով և զէնքը ձեռքին, և սակայն մենք այստեղ ամեն օր լսում ենք քրիստոնեաների ողբը, աղաղակը և նրանց ամենուրեք կոտորածը այդ բարբարոս-թուրքերի ձեռքով և այնու ամենայնիւ ոչ մի միջոց ձեռք չենք առնում: Եւ խոսում եմ առհասարակ քրիստոնեաների մասին, որովհետեւ ռուսներից էլ բնի մարդ չէ կոտորվում, ինչպէս Զիւլաշիւրի գաւառի Սօփիանի գիւղում: Ով պէտք է պատասխան տայ ժողովրդի առաջ այդ բոլոր թշուառութիւնների համար»:

ԹԱՏՐՈՆԵՒ ԵՐԱՇԵՏՈՒԹԻՒՆ

(Դրամատիկական կուրսերի բացում. —Հայոց ներկայացումներ. —Օպերային ներկայացումները Արքունական թատրոնում)

Կերակի, սեպտեմբերի 18-ին կայացաւ Դրամատիկական դասընթացների բացումը Թիֆլիսում:

Դրանց հիմնադիրն է օրերով Սօֆիա Դուրախանան, որ կազմակերպել է ուսուցիչների խումբ և յարմարեցրել մի մեծ դահլիճ թատրոնական բեմի համար:

Կուրսերի բացումը օրհնվեց մաղթանքով, որ կատարվեց ռուսներին և հայերին: Մաղթանքից յետոյ ուսուցիչ Ն. Դեբեմովին կարգաց մի գեկուցում թատրոնի և նրա նշանակութեան մասին: Դեբեմովինը առաջ բերեց Շիլլերի, Բեկինսկու, Գոգոլի կարծիքները թատրոնի գեղարուեստական և հասարակական նշանակութեան մասին: Զեկուցումը տեւեց կէս ժամ և թողեց լաւ տպավորութիւն:

Այնուհետև Ա. Սախանիս յայտնեց, որ նա ողջունում է հայոց դրամատիկական ընկերութեան կողմից կուրսերի բացումը և ցանկանում է, որ դրամատիկական կուրսերը զարգանալով նպաստեն թատրոնական գործի և մասնաւորապէս հայոց բեմական արհեստի զարգացմանը Թիֆլիսում:

Ա. Բախանիսը յայտնեց, որ նա թէ իբրեւ «Մշակի» խմբագիր և թէ մասնաւորապէս իբրեւ թատրոնական բեմագետ, ողջունելով դրամատիկական կուրսերի հիմնվելը Թիֆլիսում, ընդգծում է կաթոնաւոր բեմական կըլթութեան անհրաժեշտութիւնը: Կովկասեան բեմի վրա շատ կան գործողներ, բայց կան նաւոր բեմական արհեստ սովորածներ բնիկ կան: Իսկ կանոնաւոր ուսման պակասութիւնը մեծապէս մնասելի դեբեմաների առաջդիրութեան: Կուրսերը իրանք առկա են բեմական ձիրքերը կը յղեն, կը զարգացնեն, կը փայլեցնեն արժանաւորապէս: Միւս կողմից մեր դեբեմաները ստանալով կանոնաւոր ուսում, կ'ուսակցաբար վերաբերվելով դէպի թատրոնական գործը և ներկայացվող ստեղծագործութիւնները, կը տան հասարակութեան մտածված և զգացված խաղեր, բնորոշ և ճիշտ ըմբռնողութեամբ:

Կուրսերի հիմնադիրը շնորհակալութիւն յայտնեց ողջունողներին և հիւրերին և յայտնեց, որ նա գործ կը զնէ իր բոլոր ջանքերը հասնելու իր ծրագրած նպատակին:

Աշակերտներ և աշակերտուհիներ ընդունված են թւով մօտ 30, որոնց մեծամասնութիւնը ռուսներ են, 8-ը հայ և 1 վրացի:

Ուսումը կը սկսվի այսօր, երեքշաբթի, սեպտեմբերի 20-ին:

II

Հայոց դրամատիկական խմբի ներկայացումները կը սկսվեն հոկտեմբերի 3-ից և այնուհետեւ կանոնաւոր կերպով կը շարունակվեն: Խումբը արդէն վերջնականապէս կազմակերպված է:

Նոր պիւններ մեծագոյն մասը թարգմանական է: Խոստացված են մի քանի ինքնուրոյն պիւններ: Թարգմանական պիւնները մէջ կան թէ ուսուցիչ դրամատիկներ և թէ արտասահմաններից վերցրածներ:

III

Շաբաթ օր, սեպտեմբերի 17-ից, Թիֆլիսի Արքունական թատրոնը սկսեց օպերային ներկայացումները Վերդիի նշանաւոր «Աիդա» օպերայով: Հետեւի օրը, կերակի ռուսական օպերան ներկայացրեց Զայիզովսկու «Եւգենի Օնեգին»:

Շաբաթական բացառութեամբ Ամերիկայի դերում հանդէս եկաւ երգչուհի Կարբի, որը երբեք էլ չէր ծաղկում, ծաղկում ձայնով և ունի խելացի ու մտածված խաղ: Բազմաթիւ դերը կատարում էր Դոնաթոյ, որի ձայնը հնչում էր մաքուր և ցոյց էր տալիս ձկունութիւն և մեծ ծաղկութիւն: Եթովպական թագաւորի դերում հանդէս եկաւ Թիֆլիսի անձնաթիւք ընդհանուր Սօփիանի, որի ձայնը հաւանեց հասարակութեան: Բայց նրա ոյժը, պէտք է ենթադրել, որ իշխում էր մէջ կարողալով:

Տառնանայի դերում «Եւգենի Օնեգին» պիւնի մէջ հանդէս եկաւ երգչուհի Արցըրաշիւ: Նա ունի մաքուր, զեղեղնիկ ձայն, որ լաւ է հնչում թէ բարձր և թէ ստորին ստաւաններում: Երգչուհու բարձրագոյն աւելի հարուստ և բազմակողմանի են դարձել, սակայն Տառնանայի դերում Արցըրաշիւյի խաղը բաւականաչափ ջերմ չէ և հոգեբանական ներքնութիւնները արտայայտված են թոյլ կերպով: Օնեգինի դերում Եւրաթով ունեցաւ աշուղութիւն, թէև ոչ առաջնականապէս:

Առաջին ներկայացմանը թատրոնը լինէր էր, իսկ երկրորդին ոչ բոլորովին:

Միւրոյ

ՆԱՄԱԿ ԿԱՐՄԻՑ

Սեպտեմբերի 11-ին Արևմտադէպքերի տխուր և սարսեցնող լուրերը կայծակեւ արագութեամբ հասնում են մեզ: Դժբաղդութիւնը նրանուհի է, որ երբեք արդար և ճշմարիտ կերպով չեն հաղորդվում լուրերը, այլ ով ինչպէս ցանկանում է, առանց խորը մտածելու, առանց խղճահարկելու, թէ որպիսի չարիքներ կարող են ծագել ամեն մի ստալոյ լուրից—փոխադրած առեւտրիւն, անվստահութիւն, որոնք տանում են խաղաղ տղաբնակութիւնը դէպի կատարեալ անանկութիւն:

Չարմիտ մարդիկ կամեցան հանգամանքից օգտվել Լարաբադի և Բագուի վերջին սոսկալի դրամայից, սակայն մինչև այժմ ոչ մի դժբաղդ դէպք տեղի չունեցաւ թէ քաղաքում և թէ Կարսի շրջանում: Հայերի և թուրքերի յարաբերութիւնները խղճած չեն, մասնաւորապէս ինչպէս երևում է շրջանից առած լուրերից, երբեք չեն ցանկանում միմեկին շինարարել և նրանց չար մտադրութիւնները իրագործելու խիստ դժեմ են:

Այսպէս թէ այնպէս, Կովկասում հայութիւնը վտանգված է, պէտք է զգաստ լինել և մի շրջանի ձեռք առնել, որ նախ, ուր խռովութիւններ չեն եղել, չը լինեն, և ուր տեղի են ունեցել, աշխատել շուտ սրբել նրանց արտասուները և միջոցներ տալ նրանց օտի կանգնելուն:

Մ. Ոսկանեան

ԴԻՍԵՊԼԻՆԱՅԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Կարգապահութեան, դիսցիպլինայի թերութիւնը մասնաւորապէս մեր հոգեւոր ներքաղաքականութեան մէջ աճեց օր զգացնելի է տալիս իրան, մտքնեղով անբարոյականացում կրօնադատական դատաւարի մէջ: Եւ զարմանալի այն հանգամանքն է, որ այն հաստատութիւնը, որը ամենից շատ պէտք է նախաձեռնողը լինէր դիսցիպլինայի պահպանութեան, ինքն է նպաստում նրա խանգարման. դա՛ իշխանի սինօդն է: Իբրեւ փաստ առաջ կը բերենք մի երկու օրինակ: Մի քանի ժամանակ առաջ Աստուխանի թիւի առաջնորդ Արեւտիկէս արքեպիսկոպոս Սեդրակեանը հարկ է հաճառում պատժի ենթարկել մի քանիս, յանցաւոր մի քանի կանոնադրութիւնների և անվարարարների համար: Բանաւոր, փոխուհակ հպատակվելու իր առաջնորդի սահմանած պատժին, ապօրէն միջոցներով դիմում է սինօդին, որը փոխում է առաջնորդի վճիռը: Ինչ էր մնում անել առաջնորդին սանձարձակ քահանայի նոր շահատակութիւնների առաջնաւոր համար, եթէ ոչ օգտվել իր իրաւունքից՝ չը թողնար լի քահանային պաշտօն վաւելի իր թիւում, քանի որ առաջնորդի հեղինակութիւնը վայր էր ձգվում առանց որ և է հիմնաւոր պատճառի: Համանման մի դէպք, բայց աւելի շատ ընդուն, նորեւ տեղի է ունեցել Թիֆլիսում: Թիւիակալ առաջնորդը հարկաւոր մի քանիս, իր վատ և գալթակաւ անունով մի քանիս, իր վատ և գալթակաւ անունով արարելիքի համար: Կատարված ընդհանրական գործը առաջնորդը ենթարկում է անմիայն հայոց Կաթողիկոսի բարեհայեցողութեան: Հայրապետը, ընկնելով գործը, հաստատում է առաջնորդի վճիռը և հրամայում զըրկել նրան կամովեալից, ստացած պարգևներից և քահանայագործութիւնից ու ուղարկել արքայի վանք: Պէտք էր ենթադրել, որ ինչպէս վերջացած է Վեհափառի վերջնական վճիռը և Ն. Մատինեան քահանային մնում էր միայն՝ հնազանդելու և գնալ Տաթև: Բայց քահանան լաւ գիտէ, որ հնար կայ չը հնազանդելու: Տէր Դիւանի պակաս չեն ապօրինի միջնորդութիւնների համար: Եւ ահա մի գեղեցիկ օր քահանան յայտնվում է իշխանութեան, բայց չունենալով օրինաւոր անցագիր, ստիպվում է յետ դառնալ և ոչ միայն չէ կատարում Տաթև գնալու հրամանը, այլ սկսում է շարունակել իր քահանայագործութիւնը, հակառակ առաջնորդի և կաթողիկոսի վճիռների: Եւ ի լրումն ամենայնի, շնորհիւ ապօրինի միջնորդութիւնների, սինօդից հրաման է գալիս առաջնորդին, առաջ պատժված Մատինեան քահանային անցագիր ոչ թէ Տաթև գնալու, այլ իշխանութիւնի: Բնականաւորաբար, առաջնորդը մերժում է, քանի որ կայ Կաթողիկոսի վճիռը, դեռ չը կատարված: Բայց Մատինեան քահա-

նան չէ վստովում. նա, շարունակելով քահանայագործութիւնը, պարծենում է, որ կը յաղթէ առաջնորդին, և սինօդից հարցմունք է լինում առաջնորդին, ինչու համար անցագիր չէ տալիս քահանային իշխանութիւն գնալու: Հարցնում ենք, կարո՞ղ է դիսցիպլինա, օրինաւորութիւն հաստատվել հոգեւորականութեան մէջ, երբ ամեն մի յանցաւոր և պատժված քահանայ միջոց է գտնում չը կատարել ոչ առաջնորդի, ոչ նոյն իսկ Կաթողիկոսի հրամանը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 11/2 թերթից:

Կովկասի Փոխարքայի դիւանի սկսել է ստանալ լուրեր հայոց թիւական առաջնորդներից, որ բացվում են հայոց եկեղեցական դպրոցների:

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ երկրագործութեան և պետական կալուածների միւնիստրութիւնը նորից վերահաստատվում է: Եվանէթախը և Կրիվոյէինը հրաժարվում են: Ասում են, որ երկրագործութեան միւնիստրի պաշտօն ստանձնում է Սեդուսի ադնալականութեան պարագլուխ Սուխովիւսով:

Սեպտեմբերի 13-ին Բաթումում, Ռուսական նաւային ընկերութեան ապրանքների պահեստում բռնվել են 12 արկղ բերքանի հրացաններ, աւարճանակներ և փամփուշտներ: (Վ. Бѣт.)

Մեզ հաղորդում են, որ Կովկասի Փոխարքան մշակել է ընդհանուր և մանրամասն կանոններ հայոց եկեղեցու և դպրոցների կալուածները վերադարձնելու վերաբերմամբ և ուղարկել իր հաստատութեան ներքին գործերի միւնիստրին: Այդ հաստատութիւնն ստացվելուց յետոյ իսկոյն, երբ ամսվայ ընթացքում ամբողջ Ռուսաստանում պէտք է յանձնվեն գրաւված կալուածները: Այն ժամանակ միայն հնարաւոր կը լինի բաց անել դպրոցների մեծ մասը:

Բաթումիում սեպտեմբերի 16-ին բացվեց նահանգական զեմստովօի խորհրդակցութեան նիստը, բայց նիստը բացվելուց մի քիչ յետոյ ատորճանակի մի հարուած լվեց, որից վերաւորվեց ներկայ եղողներից մէկը: Վրաց լրագրները բացատրում են այդ բանը պատահականութեամբ, իսկ ուրիշները կարծում են, թէ այդ պայթիւնը դիտմամբ են առաջացրել, որպէս զի խաղաղեան զեմստովային ժողովին:

Թիֆլիսի VI քաղաքամասի պրիստաւ Դիւբովը հեռացված է պաշտօնից և առհասարակ ծառայութիւնից, համաձայն իր խնդրի, հիւանդութեամբ պատճառով: Այդ քաղաքամասի պրիստաւի պաշտօնը ժամանակաւորապէս արված է պրիստաւի օգնական Տուրիկովին:

«H. ՕԵ.»

Մեզ հաղորդում են, որ թէև «H. ՕԵ.» լրագրում գրված էր, թէ Հաւաքարի Արաբստանի թատրոնը փակվում է, բայց բարեբաղդաբար այդ լուրը մի քիչ վաղաժամ է: Հաւաքարի թատրոնը չէ փակվում, այլ անցնում է ուրիշ, աւելի վստահելի մարդկանց ձեռք: 6—7 անձեր, գնելով պ. Արաբստանի պատկանող բոլոր թատրոնական պարագաները և իրանց վրա առնելով այդ թատրոնական շինութեան պայմանագիրը, ցանկանում են սկսել կանոնաւոր ներկայացումներ Հաւաքարի ազգաբնակչութեան համար: Այդ խմբակի նպատակը դրամ վստահելը չէ, որովհետեւ այդ գործը Հաւաքարում շահ բերող գործ չէ. նրա նպատակն է կատարել մի օգտակար գործ հասարակութեան համար:

Պետերբուրգում ընտրված էր մի յանձնաժողով, որին յանձնված էր մշակել զինուորական վարչութեան համար և նրա ձեռքի տակ աշխատող բանուորների վիճակը բարելաւելու միջոցներ: Այդ կոմիտեան արդէն վերջացրել է իր գրադրութիւնները, որոնց մի մասը յանձնվել է զինուորական, միւս մասը պետական խորհուրդներին: Յանձնաժողովն անհրաժեշտ է համարում մտցնել օրական 8 ժամվայ աշխատանք, կանոնաւորել աւելորդ, օտոն օրերի և գիշերային աշխատանքները, նոյնպէս և կանոնաւորել, պատանդներին և երեսներին աշխատանքները. հաստատել նազազոյն օրավարձի չափը, որը պէտք է պարբերաբար աւելանայ, մշակել է բանուորական բնակարանների ձևեր,

բժշկական օգնութեան հասնելու եղանակը և այլն:

Թիֆլիսի դոմայի նախկին ձայնաւոր Ն. Դ. Զուրաբովը դիմել է քաղաքագլխի պաշտօնակատարին մի թղթով, որով բացատրում է, որ Ս. Ի. Վիտտեն, խաղաղութեան դաշնագիր կնքող յանձնաժողովի գլխավորը՝ Թիֆլիսում է ծնված: Ուստի նա առաջարկում է Վիտտենին առը Թիֆլիսի պատուաւոր քաղաքացու դիմել:

Պարիզից հեռագրում են «РУСС» լրագրին «Սաղաղութեան դաշնագրի հաստատումից անմիջապէս յետոյ Միկալոս մարզի է անձամբ գնալ և Կորէայի ասիայի վրա ընտրել տեղեր նաւահանգիստներ և մարտկոցներ կառուցանելու համար: Միտաւորական կը ձեռնարկվի նաև Պորտ-Արտուրի կղզին ամրացանք: Այդ աշխատանքները տեւելու են 2 տարի և պէտք է կատարվեն հապոնական և անգլիական ինժեներներին ձեռնորդ: Անգլո-հապոնական յարաբերութիւնները տեսակէտից շատ բնորոշ է այն, որ հապոնացիներն ուղարկում են Հնդկաստանի հիւսիսային սահմանները մի զինւորական միասն, ծանօթանալու այդ մասի զինւորական պաշտպանութեան սխեմայի հետ: Այդ միասնի կայացել է Հէրաթ և հարաւային Պարսկաստանի և Հայաստանի սահմանները վերաբերմամբ կը հաղորդէ անգլիական կառավարութեանը մանրամասն ու անհրաժեշտ տեղեկութիւններ: Կառավարութեան յատուկ պաշտօնեան բերել է այդ հարցի առիթով մանրամասն զեկուցագիրը երկու օրինակ՝ մէկը լորդ Լանսդաունի, իսկ միւսը վիկոնտ Հայաշիի համար:

Պետերբուրգի գեներալ-նահանգապետ Տրեպովը դիմել է քաղաքի բոլոր զինավաճառներին մի հրամանագրով, որով պատուիրում է նրանց չը ծախել ոչ մի զէնք ոչ ռիթ, մինչև անգամ զինուորականներին, եթէ նրանք չունեն: Թոյաւորութիւն իշխանութիւնից: Այդպիսի մի միջոց զինավաճառները համարում են չափազանց փառասեր իրանց համար, այդ պատճառով, ասում է «Н. Յ.» լրագրից, նրանք դիմել են գեներալ-նահանգապետին, որ բարեհաճի փոխել այդ կարգադրութիւնը:

Անգրիկական երկաթուղու Կլիբերի կայարանում, սեպտեմբերի 16-ին մի քանի զինված անձեր յարձակվել են կայարանի գանձապահի վրա, սպանել նրան, կոտորակել գանձաբանի բոլոր զբաղները և անհետացել:

ԲՈՒԹԱՅԻՄԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 16-ին. «Այսօր, առաւօտեան ժամի 9-ին Դոն-սկի Ազովսկի բանիկ արտելչիկը պայուսակով դուրս բերեց մի խոշոր դուռնա պետական գանձաբանը տանելու համար: Այդ միջոցին չորս աւազակներ յարձակվեցին նրա վրա, կռուից վայր գցեցին և իրանք նստելով յոյն կառքում, անհետացան: Սակայն քիչ ժամանակից յետոյ վրա հասան կռուիները և քաղաքի արուարձանում բռնեցին կառքը փողի և աւազակների հետ: Ինչպէս ասում են, փողը 60,000 ռուբլի է եղել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, 1 սեպտեմբերի

Սալմաստը անտեսական ուժեղ հարուած է կրում հայ-թուրքական ընդհարումների պատճառով: Ընդհարումները նախ աղբում են պանդուխտները վիճակի վրա, որոնց ամենափոքր անաղողութիւնը քայքայում է և Սալմաստի անտեսականը:

Երկրորդ ֆառը, որ առաջանում է ընդհարումներից, երթեկութեան ընդհատումն է և առևտրի ահազին չափերով ընկնելը: Եւրոպական Բագուրի այդ վերջին դէպքերի մասին լուրերը կայծակի արագութեամբ տարածվում են ամեն տեղ, ի հարկէ սովորական չափազանցութիւններով լցված: Հայերը մեծ երկիւղի մէջ են գտնվում, քրեութեան միակ յոյսը Եւրոպայի բարեխնամ հսկողութիւնն է որ մինչև այժմ գոն է զերև չէ հանել հայերի յոյսը:

Թուրքից լուրեր են գալիս, որ այնտեղ ամբողջ յուզումներ նշաններ է ցոյց առնում: Սալմաստում, Սոյում և Ուրմիայում առաջիկային չը կայ: Թուրք ազգաբնակիցներն արժանաւորութիւնը դէպի հայերը դուրս է

երևում. քայց և այնպէս եթէ ընդհարումները շարունակվեն և աւելի լայն չափեր ընդունեն Կովկասում, այլևս չէ կարելի յուսալ, որ ամբողջը զսպվելու կը բռնկվի անպայման հըրդեհը և վնջ է եկել անպաշտպան հայի գլխին...

Նամակս վերջացնելու վրա էի, երբ Հին-Բաղաբէյ լուր եկաւ, որ թուրքերը երեկոյան պաշտօնապէս հայերին մզկիթ են հրաւիրել, որպէսզի հաղորդեն Եւրոպայի ստացված հրահանգները փոխադարձ յարաբերութիւնների վերաբերեալ: Հայերը չեն վստահացել գնալ. հետևանքի մասին յետոյ: Այդ դէպքը իր տեսակով առաջինն է:

Մ. Մ. Ղազարեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Թուրքիայից ստացված մի նոր նամակից տեղեկանում ենք, որ Դէրսիմի բերդերը, որոնք սուլթանի իշխանութեան դէմ միշտ ըմբոստ են եղել, ոչ աւուրեց, ոչ զօրք են տուել, մի երկու շաբաթ առաջ պաշտամբութեան են դիմել և սկսել են Դէրսիմի շրջակայքում ասպատակել, նախը հօտ, ըջի—տանել: Ազդու տարութիւնը դեռ ևս բոլորովին չէ մարած. ահա մի նոր շաբաթ:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՄԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

18 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԻՍԱՅԻՆ ՀՆՈՐԴԱՎԵԼ Ե ԿՐՈՍԻ ԿՐԻՍՏԻՆ: Լրագրական տեղեկութիւններ համեմատ, 76-ը արտելչերական բերդադային հրամայված է սեպտեմբերի 17-ին գալ Ռիգա և այնտեղ զետեղվել զինւորական իշխանութեան ցուցմունքով:

Ներքին գործերի մինիստրութեան մէջ աւարտվում են ժամանակաւոր կանոնների մշակումը հրէաների ընտելութեան տեղը ընդարձակելու մասին և մտցնելու նրա մէջ մայրաքաղաքներից մէկը:

Մտադրութիւն կայ հիմնել ծովային մինիստրի օգնականի պաշտօնը, որին կանցնէ նաւատորմի անտեսական ֆունկցիաների կառավարութիւնը: Ծովային Բոժէստվէնսկու Եւպոնիայից Ռուսաստան վերադառնալուց յետոյ կը վերադադրվի ծովային գլխավոր շտաբը, որի վրա դրվում է նաւատորմի ուղղակի կառավարութիւնը: ՎԱՐՇԱՎԱ, 17 սեպտեմբերի: Օտարազգի գործերին վերաբերեալ Կորէայի յանձնաժողովի նիստերին մասնակցելու համար հրաւիրված է Սօկոլով, հին-հրաբէյն լեզուով հրատարակվող «Հացեֆեր» լրագրի խմբագիրը: ԲԵՐԼԻՆ: Ամենախնայ ձեռք չէ այն լուրը, որ Դանցիգի նաւահանգիստը առաջնակարգ բերդ է փոխվելու:

Սոկոլայով հիւանդացուների ընդհանուր թիւը Պրուսիայում մինչև երէկվայ օրը կազմում է 255: Մահվան դէպքեր 87 էին: ՕՂԵՍՍԱ, 17 սեպտեմբերի: Եւրոպայի Կոնգրեսի մարմնով սպասվում է վարչական փոխադրութիւնը դէպի կայարան նշանակված է երկուշաբթի առաւօտ:

Հացի ֆերմաներին հաղորդում են, որ հացի բերքների մեծ մասը կայարաններում, բրէզգիներին բացակայութեան և վերջին անձրևների պատճառով, փչանում են: Արևելեան սահմանների ընդհարումները հոկտեմբերից իւրաքանչիւր ամիս վարչական կողմից մեծ շոգեմուտներ, նախկին փոխադրանքները Բոժէստվէնսկու էական դարձել:

ԲԵԼՈՍՏՈԿ, 17 սեպտեմբերի: Կազմվում է հրէական յանձնաժողով Պետական Դոմայի համար հրէական ընտրողները շահերը պաշտպանելու նպատակով:

18 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ: Լրագրական տեղեկութիւններ համեմատ, ներքին գործերի մինիստրը կոմս Սոկոլով խորհրդակցութեան մէջ քննել է ժամանակաւոր կանոնների նախագիծ, որոնք վերաբերում են զբաղմունքի հնարավորութիւններին օրգաններին և որոնք սահմանում են Պետական Դոմայի համար ընտրութիւնների կատարելու ժամանակ ընտրողական հարցերը ազատ ըննելու պայմանները: Գաւառական գեներալային հսկողութիւնից կը հանվեն այնպիսի յոյուզանքներ և խորհրդածութիւններ, որոնք վերաբերվում են որպէս ընտրութեան կառավարման, նշանակման և առանձին ընտրողների թիկնածութիւններին: Կոմս Սոկոլով խորհրդակցութեան աշխատանքները կաւարտվին

հոկտեմբերի կէսին: Պետական Դոմայի համար օրէնսդրական կատարելապէս լրելականներին հրատարակութիւնը տեղի կունենայ սեպտեմբերի 19-ին: Սեպտեմբերի 20-ին Կովկասում, Թուրքաստանում և Սոնգուի գետերում — նահանգապետութեան մէջ լինելը ընտրութիւնների կանոնների ընտելութիւնից յետոյ առանձին խորհրդակցութիւնը Վիտտէի մասնակցութեամբ կը սկսէ ընել ներկայ քաղաքի քաղաքական հարցեր, այն է կառավարական օրգանների միութեան, այսինքն—Մինիստրների խորհրդի հարցը:

«НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ մտադրութիւն կայ Մինիստրների խորհուրդը դարձնել մշտական գործող հիմնարկութիւն, որի անդամները, բացի մինիստրներից, լինելին և Պետական խորհրդի ղեկավարածներին: Նախագահը Մինիստրների կոմիտէին փոխարինող այդ նոր հիմնարկութեան իրաւասութեան կենթարկվին այն բոլոր ընդհանուր հարցերը, որոնք վերաբերվում են կառավարական գործունէութեան միացմանը և որոնց լուծումը դուրս է իւրաքանչիւր մինիստրի իշխանութիւնից առանձնապէս: Այդ ընդհանուր գործերին վերաբերեալ մինիստրների ամենահպատակ ղեկուցումները անձամբ մտադրութիւն կայ փոխարինել խորհրդից բոլորը, կօլլեկտիվ ղեկուցումով: Հնչց խորհուրդը կը ընէ մասնաւոր անձերից և հիմնարկութիւններից Բարձրագոյն անունով ստացվող խորհրդածութիւնների պետական բարեխնայութեան և Ժողովրդական բարեբարութեան բարեբաւար կատարելագործութեան վերաբերմամբ: Այստեղ ձգելի ընթացիկ գործերը ըննելու համար, որոնք պահանջում են մինիստրների համաձայնութիւնը, մտադրութիւն կայ խորհրդին կից կազմել առանձին խորհրդակցութիւն, որի որոշումները պէտք է ի կատար ածվին մինիստրական կարգադրութիւնների ձեռով, առանց հասցնելու գործը Բարձրագոյն դիտութեան: Իսկ երբ առաջարկված միջոցը առանձին կարեւորութիւն ունի և նրա առիթով գործութիւնները ընդհանուր պրօգրամ սահմանելու համար պէտք է ներկայացնել Բարձրագոյն թոյլտուութեանը, այն ժամանակ հարցը պէտք է ներկայացնել Մինիստրների խորհրդին: Նրա անդամների ամբողջ կազմով:

Նոյն լրագրում լուր է հաղորդվում, որ Պօլցից Նշանակվում է անտեսութեան ղեկավար տնօրէնի նախագահ, այն ինչ «РУСС» լրագիրը հաղորդում է լուր, որ այդ պաշտօնը կը տնօրէնէ Վիտտէ:

ԿԻԵՎ, 7 սեպտեմբերի: Բարձրագոյն վարչութիւնը կազմում է Պետական Դոմայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցող անձանց ցուցակը: Կազմված է առևտրական ձեռնարկութիւնների տէրերի ցուցակը, որի մէջ մտնում են ընդամենը 1050 անձինք, այդ թիւում 478 հրէաներ, 10 կաթոլիկներ:

ՕԺՍՏԵՐԲԵՑ, 18 սեպտեմբերի: Բուդվէտ ճանապարհ ընկալ Վալիստոն: Նրա համար սրտազին ուղևոր Սարգիսի: Կայարանում տրանսպորտային է կախված «Սաղաղութիւն» բառով: Կայարանին մուտքը զարգացած էր ուղևոր և կապական գրօշակներով: Նախագահական կառքի կայարան գնալու ժամանակ առանցքը կտրվեց: Եւրոպական կառավարչութեան, ոչինչ անպատաս հետևանքներ տեղի չունեցան:

ՎԱՇԻՆԴՆՏՈՆ, 18 սեպտեմբերի: Ստացված տեղեկութիւնները համեմատ, հապոնական առևտրի մինիստրը ցանկութիւն յայտնեց, որ Միացեալ-Նահանգներում ընդունվի այն օրէնքը, որով դժուարութիւններ են յարուցանվում հապոնացիների գաղթելու առաջ դէպի Միացեալ-Նահանգները: Ըստ երկու լիցիտիւն ցանկանում է Կորէայի և Մանչուրիայի գաղթեցնել այնտեղ սաղացնելու համար ազգաբնակչութեան աւելցումը իր գերակշռող ազգացութիւնը այնտեղ հաստատելու նպատակով: Ի նկատի ունենալով այդ, հապոնական չի առարկի այն բանի դէմ, եթէ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը հրատարակէ օրէնք, որով արգելվի հապոնացիներին գաղթել Ամերիկա:

ՊԱՐԻՉ, 17 սեպտեմբերի: Մարօկիան կօնֆէրենցիա գումարելու տեղը նշանակված է Ալձէրատ: Յոյն-բուլղարական կօնֆերենցիա բարձրագոյնը: Ֆինանսների մինիստրը Բուխարէստում մտադրութիւն ունի խախտել 1900 թվին Յունաստանի հետ կապած առևտրական զախագիրը: Սեփական յունական եկեղեցի ունենալու իրաւունքը կը վերադրվի Բուլղարիայի յունական շատ համայնքներում:

ՀՈՒՄ, 18 սեպտեմբերի: Մացարիում ըզգացվում էր երկրաշարժ, որը սարսափ առաջացրեց: Երկրաշարժը ֆրանսիայի չը տուեց: ՍՕՖԻԱ, 17 սեպտեմբերի: Անհիմն են Վիեննայից տարածված լուրերը մինիստրական ձգնաժամի մասին:

ՄՕՍԿՎԱ, 17 սեպտեմբերի: Չինական դատարանների դատաւիճակները վերջերս իրանց վրա դարձրին իրաւաբանական աշխարհի ներկայացուցիչները ուղարկութիւնը և այդ հարցին կը նուրբի Մոսկվայի շրջանի երգուեալ հաւատարմատարների մերձագոյն ընդհանուր ժողովը:

19 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ: Սեպտեմբերի 18-ին Բիերկենդուլից Պետերբուրգ վերադարձաւ Թագաւոր Կայսրը Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդօրօվնայի, Թագաւորուհի Յուստինիայի և Օգոստափառ երեխաների հետ միասին:

ԿԻԵՎ, 18 սեպտեմբերի: Հրատարակված են Կիեվի գեներալ-նահանգապետի պարտաւորիչ կանոնները, որոնցով արգելվում է կրել հրազէնքներ, ձեռափայտեր սրի բերանով, խաչաչափեր, կատախներ, ֆինանական դանակներ և այլն: Այդ կանոնները խախտողները ենթարկվելու են երեք ամսվայ բանտարկութեան կամ 500 ռ. տուգանքի:

ՕՂԵՍՍԱ: Ժամանց «Միւնիխ» շոգեմուտը գեներալ Կոնդրատեմի, Լէսսարի և Բալմէտսկի նշխարներով:

ՄԻՄԻՐՍԿ, 18 սեպտեմբերի: Նաւթ գնելու ժամանակ մեծ դժուարութիւններ են կրում նաւթային երկրորդական ֆերմաների հետ պայմանագրի ունեցող շոգեմուտային ընկերութիւնները և շոգեմուտաւերբեր: Ի նկատի ունենալով, որ նաւթ տալը կը մերժեն, հնարաւոր է, որ նաւադաշնութիւնը փակվի վաղաժամ: «Կապիվա» և Մերկուրիան մի շոգեմուտ գետածոցը դրեց: «Վօլգա» ընկերութիւնը դադարեցրեց ծովային բեռների ընդունելութիւնը:

19 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ: «Правит. Вѣстник» լրագրում հրատարակված է Անտանական ուկրա, որով Վիտտէին շնորհվում է կոմսի տիտղոս Ուկրաի մէջ ասված է. «Ի տրուտուր նրա ծառայութիւնների Գահին և հայրենիքին և պետական առաջնակարգ նշանակութիւն ունեցող Մեր նրա վրա դրած յանձնարարութիւնը գերազանց իրաւով կատարելու համար, նոյնպէս և Մեր առանձին բարեհաճութիւնը յաւերժացնելու համար Ամենաողորմածաբար բարձրացնում ենք և այլն:

Լրագրական տեղեկութիւններ համեմատ, անտեսութեան ղեկավար տնօրէնի նախագահի թիկնածու անունում են Տէրնիրին և Իվաչչէնիսին: Երբ ընկալու Բորգման ներկայացու ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, մինիստրը յայտնեց, որ համալսարանական նոր կանոնադրութեան նախագիծը կուղարկվի համալսարաններին ընտելութեան համար հոկտեմբերի կէսին:

Հերթի վրա է դրվում սերբեան երկրորդ երկաթուղու հարցը:

«РУСС» լրագիրը կրկին լուր է հաղորդում, որ Վիտտէին նշանակվում է վերակազմված Մինիստրների խորհրդի նախագահ, ներքին գործերի մինիստր Բոմանով և ֆինանսների մինիստր Կոլոյցկի նշանակվում է Պետական խորհրդի անդամ:

ՊԱՐԻՉ, 19 սեպտեմբերի: «Լաֆֆանի գործակալութեան» թղթակցը հաղորդում է, որ Տիտուսի թիկնակցութեան ժամանակ Բիւլօլի հետ ընկնում է Ունգարիայի գրութեան վերաբերեալ հարցը: Թէպէտ խաղաղական կառավարութիւնը համակրում է Ունգարիային, այնուամենայնիւ նա ձեռք ձեռքի տուած կը գործէ Գերմանիայի հետ պառակտման առաջին անգամը համար Աւստրիայի և Ունգարիայի միջև: Դրութիւնը Ունգարիայում շատ լուրջ է: Սորբիստները և սլաւոնները առհասարակ պատրաստում են ներկայ կողմ, որպէս զի ձեռք բերեն անկախ պետական կազմ հարաւային սլաւոնների համար: Տիտուսին Բէրնում այցելեց շվեյցարական դաշնակցութեան նախագահին և երկուդեան 8 ժամին ուղևորվեց Բաւարիա: Հաղորդում են երկրաշարժների մասին Բուխարէստ, Օրուսո դ՛Անցիսում և Պալլանցում: Ամբողջ տեղը աւերված է: Կան շատ մարդկային զոհեր:

ՀՈՒՄ, 19 սեպտեմբերի: Տիտուսին ենթադրեալ տեսակցութիւնը Բուլղիէի հետ չի կայանայ:

ԲԵՐԼԻՆ, 18 սեպտեմբերի: Բերլինի էլէկտրական գործառնների 600 մեքնադործներ և հնոցային գործադուլ արին: Աշխատանքը ծառայողներն են կատարում: Կամէրուն գնալու է Բէլիստազի պալատականները աշխուրթեամբ վերադարձան իրանց ճանապարհորդութիւնից: Նրանց խօսքով, գերմանական առևտրական աֆրիկական կօյնիստները ծաղկող գրութեան մէջ են գտնվում և միայն երկաթուղիների բացակայութիւնը խոչնդում է հանդիսանում նրանց զարգացման:

ԿՕՊԵՆՀԱՎԵՆ, 18 սեպտեմբերի: Այստեղ յոյս ունեն, որ երկու կամ երեք խոշոր նաւեր

